ք. Երևան 07.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/11

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ժ. Ղալթախչյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Պավել Գաբրիելյան, Անահիտ Հարությունյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արմբիլդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Դադարեցնել ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.03.2019թ. կայացրած թիվ 4 արձանագրության 1.1 և 1.4 կետերը, 27.03.2019թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետը, ինչպես նաև «Արմբիլդ» ՍՊԸ-ի հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Բողոքներ քննող անձի 17.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 22.04.2019թ. նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 03.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2019թ.:

2. «Արմբիլդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արմբիլդ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Շինանյութի և/կամ կոմպրեսորային սարքավորումների և պարագաների մատակարարման նպատակով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը /այսուհետ՝ Ընթացակարգ/, որին ի թիվս այլ ընկերությունների մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՐՄԲԻԼԴ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ և որոշ չափաբաժինների մասով ծաճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Պատվիրատուի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացվել է հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության մասին: հարցման արդյունքում ստացվելմ է տեղեկատվություն առ այն, որ ընկերությունն ունի 3000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար: Ընկերությունը համաձայն չէ կայացված որոշման հետ, քանի որ վերը նշված 3000 ՀՀ դրամը հանդիսացել է դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 4 արձանագրությունը, որի N 2 որոշումով Ընկերության հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող, այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով /դրոշմանիշային վճարի մասով/ Ընկերությունն ունի ժամկետանց պարտավորություն 3000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության N 1 որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

2. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ անհրաժեշտ է հասկանալ, թե որո՞նք են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները և արդյո՞ք «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ

օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Այսպես՝

2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավորության Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝Կոմիտեի խնդիրներն են՝պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը.

Համաձայն Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև՝ ԱԱՀ),

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը.

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ դրոշմանիշային վճարը:

Ասվածը հիմնավորվում է նաև 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ թիվ 228-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Նշված որոշման հավելվածի համաձայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ հարկատեսակները՝

1. ԱԱՀ
2. Շահութահարկ
3. Եկամտային հարկ
4. Ակցիզային հարկ
5. Շրջանառության հարկ
6. Արտոնագրային հարկ
7. Բնապահպանական հարկ
8. Ոչ ռեզիդենտի շահութահարկ
9. Սոցիալական վճար
10. Պետական տուրք
11. Բնօգտագործման վճար
12. Այլ հարկային եկամուտներ
13. Ընդամենը

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող

տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ հայտ ներկայացնելիս Ընկերությունն առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առկա տեղեկատվությամբ, որից հստակ երևում է, որ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկաուտների գծով Ընկերությունը որևէ հարկային պարտավորություն չի ունեցել, դեռ ավելին համաձայն նույն քաղվածքի Ընկերությունն ունեցել է մոտ 1,000,000 ՀՀ դրամի չափով գերավճար:/Ծանուցում՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը/:

Այսինքն, ևս մեկ հիմնավոր փաստարկ, որ դրոշմանիշային վճարը չի հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, հակառակ պարագայում հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առանձին տող կլիներ նաև դրոշմանիշային վճարի մասով:

Նշված փաստերը հիմք են հանդիսանում հաստատապես հայտնելու, որ 01.10.2018թ. գնահատող հանձնաժողովի արձանագրությունը անհիմն է, քանի որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը չի հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, հետևաբար անկախ պարտավորության առկայությունից կամ բացակայությունից այդ հիմքով մասնակցի հայտը ենթակա չէր մերժման:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ՍՑ-ԷՍ-2018/133 որոշմամբ:

Վերոգրյալի ամփոփումից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա-Նոր Շիրակի փողոց-Արտաշատի մայրուղու ճանապարհահատվածի լուսաանդրադարձող, սառը եղանակով կիրառվող պլաստմարկեր /կամ այլ համարժեք/ նյութերով ճանապարհային գծանմուշների իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը չի կիրառել 2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավորության թիվ 702-Լ որոշումը,ՀՀ Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները, 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը, որի հետևանքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, ինչն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների ոտնահարմանը և խոչընդոտներ են ստեղծել գնման ընթացակարգին վերջինիս մասնակցության համար:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի ...գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Ելնելով վերոգրյալից՝ «Արմբիլդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով խնդրել է.

Դադարեցնել ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.03.2019թ. կայացրած թիվ 4 արձանագրության 1.1 և 1.4 կետերը, 27.03.2019թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետը, ինչպես նաև «Արմբիլդ» ՍՊԸ-ի հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 16.04.2019թ. թիվ 09/484 գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով «Արմբիլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, գտնուում է, որ ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ ընթացակարգի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցմանը ի պատասխան տրված եզրակացության համաձայն «Արմբիլդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետը և 44-րդ կետը որոշել է «Արմբիլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Արմբիլդ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:
- 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. … իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շինանյութի և/կամ կոմպրեսորային սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմբիլդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Արմբիլդ» ՍՊԸ-ն հայտը

ներկայացնելու (11.03.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 3000 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.03.2019թ. «Արմբիլդ» ՍՊԸ-ին տրված թիվ 933 տեղեկանքի համաձայն՝ 3000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորությունը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովներին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Արմբիլդ» ՍՊԸ-ի Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (11.03.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 3000 ՀՀ դրամ:

- «Արմբիլդ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Արմբիլդ» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Արմբիլդ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (11.03.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է ընդունվեր այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից և համարվեր հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արմբիլդ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Դադարեցնել ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.03.2019թ. կայացրած թիվ 4 արձանագրության 1.1 և 1.4 կետերով կայացված և 27.03.2019թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետով կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ